



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ՍԻԼՎԱՅԵԱՆ» ԴԱՅԼԻՃԻՆ ՍԷՋ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ

### **ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՀԱՅ ԱԲԵՏ. ՀԱՄԱՅՆՔԻ ԵՒ ՌԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Ազգային Առաջնորդարանի «Սիլվահեան» դահլիճը Երեքշաբթի, 18 Հոկտեմբերին ժամադրավայրը եղաւ շարք մը հանդիպումներու, որոնք Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին շուրջ խմբեցին հայկական կազմակերպութեանց ու յարանուանական ներկայացուցիչներ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգ. Վարչութեան անդամներէն՝ Տիար Վահան Պզտիկեանի ներկայութեամբ, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնները Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան, Զալիֆորսիոյ Հայ Գրողներու միութեան, Բ. Աշխարհամարտի ու Արցախի Վեթերաններու միութեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան պատուիրակութիւնները. վերջինին կ'ընկերանար «Ազատ Օր» պաշտօնաթերթի ներկայացուցիչը:

Իրերայաջորդ հանդիպումները առիթ տուին պատուիրակութեանց ու ներկայացուցիչներուն, որպէսզի տեղեկութիւններ հաղորդեն իրենց աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին: Խորհրդակցութեան նիւթ դարձան ընդհանրապէս հայութիւնը ու մասնաւորաբար մեր Թեմը յուզող, ինչպէս նաեւ հայրենիքի հզօրացման ու իրավիճակի բարեփոխման հարցերը: Վեհափառ Հայրապետը, իր կարգին, խօսեցաւ իր հովուապետական այցելութեան նպատակներուն, ինչպէս նաեւ Կաթողիկոսութեան այն աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին, որոնք կապ ունին հայութիւնը յուզող հարցերուն ու առաջադրանքներուն հետ:

Տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

### **HIS HOLINESS MEETS WITH MEMBERS OF THE ARMENIAN EVANGELICAL CHURCH AND ARMENIAN DEMOCRATIC-LIBERAL PARTY**

On the afternoon of Tuesday, October 18, 2011, His Holiness Catholicos Aram I had a number of meetings with community members at the Prelacy "Sulahian" reception room. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council member Mr. Vahan Bezdikian, joined His Holiness at the meetings.

His Holiness met with representatives from the Armenian Evangelical Union of North America, Armenian Writers Association of California, Armenian Veterans of World War II and Artsakh, and the Armenian Democratic-Liberal Party. A representative from the "Azad Or" newspaper joined the last meeting.

The meetings were an opportunity for an exchange of information and a discussion on general concerns of the Armenian people. His Holiness also spoke of the main themes of his Pontifical Visit to the Western Prelacy and the endeavors and mission of the Catholicosate.

Each of the meetings concluded with an exchange of mementos.